


Կիպրոսի տագնապով ՄԱԿի յատուկ բա- նագնաց Ալվարո տե Սոթո երկն անհրաժեշտ նկատեց, որ բաժնուած կղզիին տագնապին լուծման համար թափուող ճիգերը բազմա- պատկուին:

Կիպրոսի նախագահ Կլաֆրոս Քլերիտես եւ թրքական համայնքի ղեկավար Ռաուֆ Տենքթաշ այսօր պիտի ունենան հանդիպում մը, որ քաղաքական ղեկերու կողմէ կը նկատուի վերջին առիթ մը՝ տագնապը լու- ծելու, նախքան որ Եւրոպական Միութեան Կիպրոսի անդամակցութիւնը ընդունի:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՇԱՐՈՆ ԿԸ ՓՈՐՁԷ ԽԱԲԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԸ



Զօր. Լահուտ եւ վարչապետ Հարիրի երկն ընդարկեցին իրաճանցեաց եւ շրջանային զարգացումները:

Նախագահ զօր. Էմիլ Լահուտ երկն հաստա- տեց, որ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի քննադատի նիստին արտասանած խօսքը ձեւա- կան նենգ խուսանաւում մըն է, որուն նպա- տակն է Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի միջնորդութեամբ շրջա- պտոյտի նախօրեակին խաբել միջապգային հանրային կարծիքը:

Շարոնի խօսքերը յստակօրէն կը հակադրու- լին ՄԱԿի թիւ 194, 242, 338, 425 եւ միւս որո- շումներուն, եւ կ'ակնհասարեն խաղաղու- թեան գործընթացի բոլոր հիմքերը, երբ կը մեր- ժեն պաղեստինցի գաղթականներու տուն- դարան ու 1967ին բռնագրաւուած արաբական հողերէն իսրայէլեան բանակի հեռացումը, եւ պայման կը դնեն, որ սահմանները բանակցու- թեան նիւթ պետք է ըլլան, եւ ինթիֆատան վերջ պետք է գտնէ», ըսաւ նախագահ Լահուտ, դի- տել տալով, որ այս կետերը նաեւ կը հակադրու- լին Պ' ընդհանրապէս վեհաժողովին որդեգրուած խա- ղաղու շեան արաբական նախաձեռնութեան:

Զօր. Լահուտ հաստատեց, որ Շարոնի խօսքե- ռը ոչ մէկը կրնան համոզել մանաւանդ, որ Իս- ռայէլ ամէն օր կը սաստկացնէ պաղեստինցի ժողովուրդին դէմ իր սպանութեանց, տեղահա- նութեան եւ բնաջնջումի քաղաքականութիւնը: Ան ընդգծեց, որ իսրայէլեան նորագոյն յարձա- կումը սկսած է խաղաղութեան արաբական նա- խաձեռնութեան յայտարարութեան յաջորդ օրը, հաստատելով Իսրայէլի գէշ դիտաւորու- թիւնը, որ կը մերժէ խաղաղութիւնը, եւ կ'ուզէ բռնի ուժով պարտադրել իր պաշտպանութիւնը միջապգային ընտանիքին կողմէ որդեգրուած խաղաղութեան բոլոր սկզբունքներու հա- շտույն: Իսկ այս թշնամական քաղաքականու- թիւնը շարունակելու համար կը շահագործէ Սեպտեմբեր 11ի դէպքերը:

ԴԵՄՊԱՆ Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ ՆԱԽԱՐԱՐ ՀԱՄՄՈՒՏԻ

Լիրանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յով- ճանիսեան երկն այցելեց Պուսթրոս պալատ, ուր տե- սակցութիւն ունեցաւ արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտի հետ: Ան Համմուտի յանձնեց Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի շնորհակարգիրը՝ Հայաստանի եւ Լիրա- նանի միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման տասնամեակին առիթով:

Դեսպան Յովճանիսեան նախարար Համմուտի հետ քննարկեց շրջանային իրազարժուութիւնները:

ՌՈՒՍԻԱ - ՕԹԱՆ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռուսիա եւ ՕԹԱՆ երկն բանակցութեանց չորրորդ փուլ մը սկսած են՝ Ռէյքեալիքի մէջ (Իսլամաթ) յա- ռաջիկայ ամսուան ՕԹԱՆի արտաքին գործոց նա- խարարներու ժողովէն առաջ, միացեալ մոր խոր- հուրդի մը ստեղծումին գծով տարակարծութիւննե- ռուն յաղթահարելու համար:

ՕԹԱՆի ընդհանուր փոխ քարտուղար Կունքըր Ալթընպըրկ, որ քաղաքական հարցերու պատասխա- նատու է, արտաքին գործոց փոխ նախարար Եւգե- նի Կուսարովի հետ միօրեայ ժողովի մը համար Մոսկուա մեկնած է:

Նպատակը ստեղծումն է բեմի մը, ուր Ռուսիա պիտի կարենայ իր Պաղ Պատերազմի օրերու թշնա- մի ՕԹԱՆի 19 անդամ-երկիրներուն հետ իբրեւ հա- ռասար գործակից մասնակցի: Անիկա նաեւ ըսելիք պիտի ունենայ պաշտպանութեան մարզին մէջ յա- տուկ միջոցներու շուրջ որոշումներու կայացման մէջ:

Շար.՝ էջ 10

ԱԶՏԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

1500 Լ.Ո. 75ԻԳ. ՏԱՐԻ, ԹԻՒ 28 (21078) ԵՐԵՎԱՆԻ, 9 ԱՊՐԻԼ 2002 10 ԷՋ

ՄԱՐԳՍԵԱՆ - ԻՎԱՆՈՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հայաստանի եւ Ռուսիոյ պաշտպանու- թեան նախարարներ Սերժ Սարգսեան եւ Սերգէյ Իվանով երկն հանդիպում մը ունե- ցան Մոսկուայի մէջ: Քննարկուեցան Հաւա- քական Անվտանգութեան Պայմանագիրի ծիրէն ներս հայ-ռուսական գործակցու- թեան առնչուող հարցեր:

Նախարարները նաեւ անդրադարձան Հայաստանի մէջ ռուսական զինուորական ներկայութեան եւ Հայաստանի սահմաննե- ռու պաշտպանութեան ուղղութեամբ երկու երկիրներու գործակցութեան արդիւնաւե- տութեան բարձրացման առնչուող խնդի- րներու:

ԱՐԻԷԼ ՇԱՐՈՆ Կ'ԱՆՏԵՍԷ ՌԻԱՇԻՆԿՈՐԸ ԵՒ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՎԱՅՐԱԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐՈՒՆ ԴԵՄ

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն որոշած է շարունակել պաղեստին- եան շրջաններուն դէմ արշաւը՝ անտեսելով ու- ժերը հեռացնելու ամե- ռիկեան պահանջը: Շա- ռոն անփոփոխ կը պահէ կեցուածքը անտեսելով նաեւ Միացեալ Նահանգ- ներու արտաքին գործոց նախարար Քոլին Փոուը- լի շրջան ժամանումը: Այսրյորդանանի ժե- նին եւ նապուս քաղաք- ներուն մէջ բախումները շարունակուեցան պա- ղեստինցիներուն եւ իս- ռայէլեան ուժերուն մի- ջեւ, իսկ Բեթղեհէմի մէջ իսրայէլեան ուժերը կրակ բացին Ս. Մ'նշոբեան եկեղեցիին վրայ, ուր արտասանած են պաղես- տինցի զինեալներ: Բա- նակն ու պաղեստինցի-

Բեթղեհէմի եկեղեցիին վրայ, դիտել տալով, որ Իսրայէլ բարբարոսու- թիւն կը կատարէ: Կաթո- ղիկէ կրօնաւոր մը ըսաւ, որ Իսրայէլ զրօժած է եկե- ղեցիին դէմ յարձակում չգործելու խոստումը: Պաղեստինեան աղ- ըիւրներ քննադատեցին Շարոնի ճառը՝ խորհրդ- դարանին մէջ, ուր իս- ռայէլացի վարչապետը յայտարարեց, որ բանա- կը պիտի շարունակէ Այսրյորդանանի դէմ զին- ւորական գործողու- թիւնը մինչեւ որ նուաճէ իր բոլոր թիրախները, որոնց կարգին է պաղես- տինցիներու ձեռքակա- լութիւնը: Շարոն խոս- տացաւ սակայն շուտով աւարտել գործողու- թիւնը: Ան պատրաստա- կամութիւն յայտնեց նա-



Իսրայէլացի զինուորներ կը հսկեն Բեթղեհէմի մէջ:

չըսաւ, թէ որո՞նք չափա- ւորական կը նկատուին: Արար մեկնարաններ ան- հաւանական նկատեցին, որ արար ղեկավարներ ընդառաջեն Շարոնի, այնքան ատեն որ կռիւր կը շարունակուի Այսր- յորդանանի մէջ: Շարոն ըսաւ նաեւ, որ պատ- րաստ է աշխարհին որե- լէ կողմը երթալու եւ առանց որեւէ նախա- պայմանի տեսակցու- թիւն ունենալու արար ղեկավարներու հետ: Արար դիւանագէտ մը ըսաւ, որ Շարոնի հետ կարելի չէ բանակցու- թիւններ կատարել այն պահուն, երբ իր ուժերը Ռամալլայի մէջ իր կիսա- ներ գրասենեակին մէջ շրջափակուած կը պահեն պաղեստինեան իշխա- նութեան նախագահ Ես- սէր Արաֆատը, ինչպէս նաեւ գրաւուած կը պա- հեն պաղեստինեան շրջանները: Շարոն յայտնեց նաեւ, որ արար

ղեկավարներու հետ հան- ժամէ: Իսրայէլի վարչապետը քննարկէ Փոուըլի հետ, որ շրջանը նաեւ Մէլուտա- երը ան այս շաբթուան ընթացքին Իսրայէլ ժա- շար.՝ էջ 10

ՊՈՒՇ ԿԸ ՊԱՀԱՆՁԷ ԱՆՅԱՊԱՂ ՀԵՌԱՅՆԵԼ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ

Միացեալ Նահանգներու նախագահ ձորն Պուշ երկն Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն- Գեմ պահանջեց իսրայէլեան բանակը «անյապղ եւ հիմա» հետացնել պաղեստինեան ինքնավար շրջաններէն:

Պուշ, ցուցամտը թափահարելով, յայտարարեց. «Ինչ որ ըսի Իսրայէլի վարչապետին, յստակ է. կ'ակնկալեմ որ իսրայէլեան բանակը անյապղ հետանայ պաղեստինեան շրջաններէն»:

Միւս կողմէ, Անթրոնի Ջիմի տեսակցեցաւ Շա- ռոնի հետ, որուն յանձնեց Պուշի նամակը: Մեկնաբաններու համաձայն, Արիէլ Շարոնի անտեսումի քաղաքականութիւնը հարուած մըն է Պուշի:

Ներքին նախարար Էլ- Էննալու արար չափա- ւորական ղեկավարնե- ռու հետ, խաղաղութեան մասին խորհրդակցելու համար: Սակայն Շարոն

ՀԱՊԻ ԾԻՐԷՆ ՆԵՐՍ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայաստանի նա- խագահ Ռուպիք Քո- չարեան երկն ընդու- նեց Հաւաքական Ան-

վտանգութեան Խոր- հուրդի ընդհանուր քարտուղար Վալերի Նիքոլայեանին, որ

Հայաստան ժամանեց Հաւաքական Ան- վտանգութեան Պայմա- նագիրի (ՀԱՊ) մաս- նակից պետութիւննե- ռու արտաքին գործոց եւ պաշտպանութեան նախարարութիւննե- ռու միջեւ հերթական խորհրդակցական հանդիպումին մաս- նակցելու համար:

Նախագահ Քոչարե- ան ներկայիս նախա- գահն է Հաւաքական Անվտանգութեան Խորհուրդին: Քոչարե- ան եւ Նիքոլայեան քննարկեցին Երեւա- նի մէջ կայանալիք հանդիպումին, ինչ- պէս նաեւ յառաջիկայ Մայիսի Մոսկուայի մէջ կայանալիք Հաւա- քական Անվտանգու- թեան Խորհուրդի յո- բելեանական նստաշը- ղանի նախապատ- րաստութեան առնչ- յուող հարցեր: Անոնք նաեւ մտքեր փոխա- նակեցին ՀԱՊի ծիրէն ներս համագործակ- ցութեան հետանկար- ներու մասին:

ԿԱՐՍ - ԱԽԱԼՔԱԼԱՔ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ ԿԱՌՈՒՅԵԼՈՒ ՀԵՌԱՆԿԱՐ

Վրաստանի պետական նախարար Ավթաղիլ ձոր- պենատձէի եւ իր թուրք պաշտօնակից Մեհմէթ Քեչէ- ջիլիքի միջեւ շարաթավերջին թիֆլիսի մէջ կայացած է հանդիպում մը, որուն ընթացքին քննարկուած են իբրեւ «Մետաքսի մեծ ճանապարհ»ի բաղկացուցիչ մաս կարս - Ախալքալաք երկաթուղիի կառուցման հեռանկարները:

Թուրք նախարարը նշած է, որ կարս - Ախալքա- լաք երկաթուղիի բանեցումը հապէս կը բարձրացնէ «Մետաքսի մեծ ճանապարհ»ի եւ եւրասիական բոլոր փոխադրամիջոցներու մրցունակութիւնը: Ըստ Քե- չէջիլիքի, այս ծրագիրի իրականացման նկատմամբ արգէն մեծ հետաքրքրութիւն կը ցուցաբերէ Չինաս- տանը:

Իր կարգին, վրացի պետական նախարարը յայտ- նած է, թէ վրացական կողմը կը գիտակցի այդ երկա- թուղիին կառուցման տնտեսական եւ քաղաքական նշանակութեան, եւ պատրաստ է աշխուժացնելու գործակցութիւնը թուրքիոյ հետ՝ երկաթուղիի կա- ռուցման համար:

Շար.՝ էջ 10

ԱԿՆԱՐԿ

ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՒ ՀԱԿԱԴԱՐՉՈՒԹԻՒՆ

Թուրքիոյ վարչապետին զգայացունց յայտարարութիւնը մեծ աղմուկ բարձրացուցած է իսրայէլեան շրջանակներու մէջ: Յատկապէս Միացեալ Նահանգներու հրէա- կան լոպիս կը շարունակէ հակապղել Էճեիթի՝ Իսրայէլը իբրեւ ցեղասպան ամբաստանող յայտարարութեան: Ուաշինկ- թընի շարք մը հրեայ լոպիստներ յայտ- նած են, որ նոյնիսկ արաբական աշխար- հի ամէնէն արմատական ներկայացուցիչ- ները այս տարողութեամբ ամբաստանու- թիւն չեն կատարած Իսրայէլի հասցէին:

Իսրայէլ կրկնակիօրէն խոցուած կը զգայ իր ազգային-պետական արժանա- պատուութիւնը, որովհետեւ հարուածը կու գայ իր ռազմաքաղաքական ամէնէն սերտ դաշնակիցներէն մէկէն: Այն պետութիւնը, որուն գործարար զեղասպանական արարքին տարողութիւնը Իսրայէլ փոր- ձած էր նսեմացնել եւ իր արտաքին գոր- ծոց նախարարով, եւ Վրաստան-Հայաս- տանի մէջ իր դիւանագիտական ներկա- յացուցիչով:

Իսրայէլեան քաղաքական շրջանակնե- ռը մինչ այժմ կը յայտարարէին, որ ող- ջակիցում-ցեղասպանութիւն հասկացու- ղութեան ստորագիծները իբրեւ ժողո- վուրդի միայն իրենք կ'ամբողջացնեն եւ իբրեւ ողջակիցումի կամ ցեղասպանու- թեան պարագայ կը կապմեն բացառու- թիւն: Կ'երեւի պետք է սպասէին դաշնա- կիցի հարուածին, որպէսզի դարձեալ Ուա- շինկթընի մէջ սկսէին սկսնակութիւններ ընել Թուրքիոյ կողմէ գործադրուած Հա- կական Յեղասպանութեան («Արմէն- փրէս», 5 Ապրիլ 2002):

Վայրագութեան եւ ցեղասպանութեան համապօր արարքներու մէջ Թուրքիոյ եւ Իսրայէլի նման դաշնակիցներ վիրար կը գերապանցեն: Բարեբախտաբար հայ քա- ղաքական մտածողութիւնը միակ ցեղա- սպանեալի կարգավիճակի պատմաքաղա- քական բարդոյթը չունի եւ նոյն ուժգնու- թեամբ կը դատապարտէ աշխարհի տա- րածքին գործուած ու գործուող բոլոր ցե- ղասպանութիւնները: Մեկի կը մնայ սպա- սել, որ ցեղասպան Թուրքիան այլ դաշնա- կիցներ եւս դատապարտէ իբրեւ ցեղաս- պան, որպէսզի... ամբաստանող կողմե- ռը իբրեւ հակադարձութիւն սկսի իսուիլ Հայկական Յեղասպանութեան մասին:

«Ա.»

ՀԱՐԻՐԻ ԱՅՅԵԼԵՑ ՍՖԵՅՐ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ



Սֆեյր պատրիարք կը դիմաորէ վարչապետը:

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ այցելեց Պքերքէ, ուր Նասրալլա Սֆեյր պատրիարքին հետ ունեցաւ աւելի քան ժամ մը տեւած հանդիպում մը:

Հարիրի յայտարարեց, որ քննարկած են բոլոր ընդհանուր հարցերը եւ մասնաւոր շրջանային իրավիճակը: «Բոլորը համաձայն են, որ այս պահը ներքին միասնութեան պահ է, եւ բոլոր կողմերը միասնաբար պետք է դիմագրաւեն երկրի դիմագրաւած մարտահրաւէրները», ըսաւ ան:

Սֆեյր պատրիարք ըսաւ, որ Հարիրիի հետ իր ունեցած դռնփակ հանդիպումը լաւ էր:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ՀԸՉՊԱԼԼԱՅԻ հոգեւոր առաջնորդ շէյխ Մոհամետ Հիւսէյն Ֆատալլա երէկ նկատել տուաւ, որ Իսրայէլ անկարող է նոր ձակատ մը բանալու հարաւի մէջ, որովհետեւ այս անգամ դիմադրութեան հրթիռները մինչեւ Հայֆա պիտի հասնին:

● ՎԱՐՉԱՊԵՏ Ռաֆիք Հարիրի երէկ ընդունեց ներքին գործոց նախարար Էլիաս Մըրը, որուն հետ քննարկեց Լիբանանի ու շրջանը յուլոյղ քաղաքական եւ ապահովական հարցեր:

● ԶԲՕՍԱԸՐՉՈՒԹԵԱՆ նախարար Քարամ Բարամ-երէկ իր գրասենեակին մէջ ընդունեց Կրօնաբանական և Գրական գրասենեակներու սեփականատէրերու ընկերակցութեան պատուիրակութիւնը: Խորհրդակցութիւններու արտոնքը կապմեցին նախարարութեան եւ ընկերակցութեան գործակցութեան հետնակարները:

● ՊԵՅՐՈՒԹԻ ըմպելի ջուրին կատարուած քննութիւնները ցոյց տուին, որ մայրաքաղաքին ըմպելի ջուրը մաքուր է եւ վերծ է որեւէ մանրէ:

ՄԱՀԱԶԴ

Խուճը մը բարեկամներ կը գուժեն

ԶԱՐՈՒՀԻ ԶԷՉԵԼԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 8 Ապրիլ 2002, առաւօտեան ժամը 4:00ին, Ազգային Ծերանոցին մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ նոյն օրը կէսօրէ ետք ժամը 1:30ին, Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատան մատրան մէջ:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Ժանէթ Ունճեան եւ զաւակը՝ Արա Տէր եւ տիկին Ժաք Ունճեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Ժիրայր Ունճեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Ժորժ Ունճեան եւ զաւակը Տիկին Լուսին Ունճեան եւ զաւակունք Տիկին Ուսաննա Եղազեան եւ զաւակունք Պր. Մանուէլ եւ օրիորդ Տիրուհի Մելիքեաններ Տէր եւ տիկին Պեշիր Խաչատուրեան եւ զաւակունք Դաւիթեան ընտանիք
Լորենցո ընտանիք
Փափագեան ընտանիք
Գազանճեան ընտանիք
եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, հօրեղբոր եւ հարազատին՝

ՊԵՏՐՈՍ (ԺԱՆ) ՅԱԿՈՒ ՈՒՆՃԵԱՆԻ
(Ծնեալ՝ Հալէպ, 1926ին)

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 8 Ապրիլ 2002ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երեքշաբթի, 9 Ապրիլ, կէսօրէ ետք ժամը 4:00ին, Էջրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, ուրկէ Հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ֆրնի Շրպպէի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:

● Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին պակաս՝ Ժաք Ունճեանի բնակարանը, Անթիլիաս, «Թաքատուն» փողոց, «Սքալ Պլու» շէնք, 4րդ յարկ, Երեքշաբթի 9, Չորեքշաբթի 10 եւ Հինգշաբթի 11 Ապրիլին:

ՄԱԶԱՐԷ ԶԵՊԱՅԻ ՃԱԿԱՏԸ ԲՈՆԿԵՑԱԿ

Մազարէ՛՛ Շրպայի ճակատը վերստին բռնկեցաւ երէկ, երբ իսրայէլեան օդանաւային եւ հրետանիի ռմբակոծումներուն հակադարձելով՝ դիմադրութիւնը հարուածեց Մազարէ՛՛ Շրպայի մէջ իսրայէլեան դիրքերը:

Իսրայէլեան հրետանին ռմբակոծեց Քֆար-շուպայի բլուրները, Նաքբարը եւ Ուատի Ասալը: Մինչ այդ, իսրայէլեան օդանաւեր թռիչքներ կը կատարէին հարաւի արեւմտեան, կեդրոնական եւ արեւելեան հատուածներուն, Էլժիմ Թրֆֆազի եւ Ժապալ Շէյխի վերեւ: Անունք աւելի ուշ Պէյրութի վերեւ կտրեցին ձայնի պատը:

Կէսօրէ ետք դիմադրութիւնը ռմբակոծեց

Մազարէ՛՛ Շրպայի մէջ իսրայէլեան բանակի դիրքերը:

Հաղորդուեցաւ, որ դիմադրութեան ռմբակոծումէն հրգե՛՛ մը առաջացած է Ռուայէթ Քարնի իսրայէլեան դիրքի գէնքի մթերանոցին մէջ: Նաեւ հաղորդուեցաւ, որ իսրայէլեան «Մերքաւ» տիպի հրասայլ մը ուղղակի հարուած ստացած է դիմադրութեան հրթիռարձակումներուն ընթացքին: Իսրայէլեան օդանաւեր ապա ռմբակոծեցին Քֆարշուպայի շրջակայքը:

ԶՕՐԱԶԱՐԸ ԵՒ ԱՊԱՆՈՎՈՒԹԵԱՆ ՍԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐ

Իսրայէլեան բանակը երէկ յայտարարեց, որ

հրահանգած է զօրահաւաք կատարել գործօն ծառայութեան կանչելու պահեստի զինուորներ, որպէսզի զանոնք տեղադրէ Լիբանանի հետ սահմանին վրայ:

«Հրգայալլայի հարուածներուն պատճառով իսրայէլի հիւսիսային սահմանին վրայ կացութեան վատթարացումին ի տես բանակը որոշեց պահեստի զինուորներով ամրապնդել այդ դիրքերը մը:

Միւս կողմէ, «Նտիոք Ահրոնո» օրաթերթը, իսրայէլեան ապահովութեան ազբուրէ մը քաղերով իր տեղեկութիւնները, հաղորդեց, որ իսրայէլ կը շարունակէ ինքնազստումի քաղաքակա-

Շար.՝ էջ 3

ՊԸՐՐԻ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԷ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ԿԵՑՈՒԱԾՔԸ

«Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երէկ Միացեալ Նահանգներու դեսպան Վինսընթ Պէթրի ըսած է, որ Ուաշինկթըն թող չխորհի, թէ իր արարք բարեկամներուն դիրքը լաւ է անոնց ժողովուրդներուն դիմաց», յայտնեցին Պըրրիի մտիկ աղբիւրներ:

Աղբիւրներուն համաձայն, Պըրրի քննադատած է Ուաշինկթընի կեցուածքը, որ կ'անտես պաղեստինցի ժողովուրդին Իսրայէլի գործած քարոզը, եւ հարց տուած է, որ Միացեալ Նա-

հանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլ Միջին Արեւելք կու գայ հարցը լուծելու՝ թէ հովանաւորելու տազնապին վատթարացումը, որովհետեւ ի՞նչ պէտք կարելի է լուծել հարցը եւ բարելաւել մթնոլորտը տանց այցելելու նաեւ Սուրիա եւ Լիբանան:

Միւս կողմէ, խորհրդարանի նախագահ Յինիլի Իրամանատար Կօր. Լայիթ Թիւարիի հետ քննարկեց հարաւի վիճակը եւ ցաւ յայտնեց Յինիլի պիտուր

Շար.՝ էջ 3

ՄԱՐՄՆԱՄԱՐԶԻ ՀԱՐՑԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան Ֆրանսախօս երկիրներու երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարներու համագումարի փոխ նախագահի հանգամանքով հրաւէր ուղղեց «Մարմնամարզը առանց վայրագութեան» թեմայով խորհրդաժողով մը գումարելու Պէյրութի մէջ, Ֆրանսախօս երկիրներու կազմակերպութեան վեհաժողովի նախօրեակին, այս վեհաժողովին որդեգրելիք բանաձեւերուն գծով առաջարկներ ներկայացնելու համար:

Նախարար Յովնանեան այսօր կէսօրէ ետք Ֆրանսայի դեսպան Ֆլիփ Լը Բուրթիէի հետ պիտի ստորագրէ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան բռնագաւառներէն ներս Լիբանանի եւ Ֆրանսայի գործակցութեան մասին փորձագոյ մը:

STUDIO
Lantern
● Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ
Շեռ. 01-266866
Էլ. 03-695399

La lumière en privilège
G. AYANIAN & SONS
Dora, (01) 255222/3/4/5/6 - Gemmaye, (01) 447000-445396 - (03) 627728/9, Fax: (01) 265187-582357

ՄԱՐԵՅԷ ՄԱ ՍԵԼԻԻԼԵՐՆԵՐԸ ...

Յուզարկաւորութեան մը ներկայ գտնուող սգակիրի մը գրպանին մէջ երբ սելիլերը հնչէ, ի՞նչ կրնայ պատահիլ եկեղեցին մէջ: Կամ եթէ պատմաբանասիրական կոթողային գործի մը երկրորդ հրատարակութեան առիթով կազմակերպուած երեկոյի մը ճիշդ կիսուն, երբ սելիլերը հնչէ, ի՞նչ կրնայ պատահիլ: Բնականաբար եկեղեցին գմբէթը փուլ պիտի չգա, ոչ ալ երեկոյին մեծարող բանասերին թեւածող զգին լեղապատառ պիտի փախչի:

Պարպապէս ամբողջ մթնոլորտը պիտի խանգարուի, պահին խորհրդաւորութիւնը պիտի չքանայ եւ սգաւորները... պիտի սկսին մտածել իրենց առօրեայ տաղտուկներուն մասին, փոխանակ իրենց մունջ աղօթքներով ձամբու դնելու հանգուցեալին հոգին:

Սուաքին սելիլերը հնչեց Մաղաքիս արք. Օրմանեանի «Ալգապատում» գործին երկրորդ հրատարակութեան առիթով կազմակերպուած երեկոյին: Սելիլերին տէրը իրարանցումի մատնուեցաւ, էլաւ ոտքի ու վազեց սրահէն դուրս: Այս բոլորը պիտի չպատահէր, եթէ ան նախապէս մարտը ըլլար սելիլերը: Ինքզինքին պիտի խնայէր այդ վազքը, ներկաները պիտի չխանգարուէին եւ ամէն ինչ պիտի ընթանար հեշտաւ, ըստ ծրագրուածին:

Պահ մը ընդունինք, որ կարելու անյետաձգելի գործեր կան ու անկարելի է սելիլերը մարել. ոչինչ, ապկա հասկնալի է, որովհետեւ ամէն մարդ ունի իր անյետաձգելի գործերը: Լուծումը շատ դիւրին է: Տունը մնացէք ու սպասեցէք, որ սելիլերը հնչէ: Այդ պարագային մէկը չէք խանգարէր, ոչ ալ ստիպուած կ'ըլլաք սենեակէ սենեակ վազելու:

Երկրորդ սելիլերը հնչեց յուզարկաւորութեան եկեղեցական արարողութեան ընթացքին: Լուծում մէջ հնչող պանգին ձայնը անհեթեթ է անտեղի ըլլալուն կողքին նաեւ խանգարեց մթնոլորտը եւ պատճառ դարձաւ, որ ներկաները իրենց ուշադրութիւնը շեղեն եւ սկսին իրենց շուրջը փնտնելու հնչող սելիլերին տէրը, որ երբեք տակնուվրայ չեղաւ: Եւ սելիլերը հնչեց ու հնչեց մինչեւ որ հեռաձայնողը ձանձրացաւ ու ... սելիլերը լոնց:

Ամէն տեղ եւ միշտ կարելի է սելիլեր պտտցնել ու մասնաւոր պանզը բաց պահել, որպէսզի անկա հնչէ անկաշկանդ: Պատասխանը գլխազիր ՈՉ է: Այդ յուզարկաւորութեան եւ հանդիսութեան ներկայներուն համար գոնէ այդպէս էր: Անոնց կարծիքն ալ պետք է յարգուի...

Ա. ԱՊՏԱԼԵԱՆ

ԿՈՒԶՈՒԻ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● JACK GIFT հաստատութեան Gadgetsներու վաճառատունը կարիքը ունի վաճառող օրիորդի մը, վաճառող շատ լաւ պայմաններ. դիմել՝ հեռ. 01-266982:

365 ՕՐԵՐԵՆ ՕՐ ՄԸ
ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ
Սոյն ձեռնարկին ազգային մը կը ստանձնէ օրան մը ձաշի ծախսը՝ 365 տոլար:

BALTAYAN ELECTRIC
TUNGSRAM
... for a brighter world
80% ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԱԶ ՍՊԱՌՈՒՄ
ՍՈՎՈՐԱԿԱՆ ԼԱՄՔԵՐԷ 10 ԱՆՊԱՄ ԱԿԵԼԻ ԴԻՄԱՅՈՂ
ԽՆԱՅՈՒՄԱԿԱՆ ԵՒ ԵՐԿԱՐԱՅԵԼԻ ԼԱՄՔԷ
Ա մասնաճիւղ Պոլոն Համուտ, Արմենիա պողոտայ, հեռ. 262901
Բ մասնաճիւղ Տորա, հեռ. 261800, 259600

ՓՈՒԹԻՆ ԴԺԳՈՅ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐՈՒ ԴԱՆԴԱԴ ԸՆԹԱՅՔԷՆ

ՄՈՍԿՈՒԱ, 8 (ՌՈՅԹԸՐԶ)։- Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին Երկուշաբթի օր իր կառավարութեան յայտնած է, թէ պէտք է աւելի համարձակ քայլերու դիմէ Ռուսիոյ տաճարապալի տնտեսութիւնը վարձագներու համար, անոր անդամներէն պահանջելով, որ նոր գաղափարներ առաջարկեն այս ամսուան վերջը իր արտասանելիք խօսքէն առաջ:

Հրապարակու հասցեագրուած քննադատութիւնը տեղի կ'ունենար շուկաներու ներքեւ, ըստ որոնց՝ Կրեմլին դժգոհ է տնտեսական բարեկարգումներու ընթացքէն եւ թէ Փութին արմատական քայլեր կը պահանջէ՝ տնտեսական աճին թափ տալու համար:

Մարտ 2000ի ընտրութիւններուն յաղթանակ ապահովելէ ի վեր, Փութին կենսամակարդակին բարձրացումը բանալի առաջնահերթութիւն մը դարձուցած է, արեւմտամետ արտաքին քաղաքականութիւն մը որդեգրելով՝ իր դատին օժանդակելու համար:

ՊԸՐՐԻ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԷ...

Շարունակուած 2րդ էջէն ներու խոշտանգումին համար:

ՊԵԹԸԼ

Միացեալ Նահանգներու դեսպանը յայտարարեց, որ քննարկած են հարաւի շատ վտանգաւոր վիճակը, եւ թէ նախանցեալ գիշեր վարչապետին ու պաշտպանութեան եւ արտաքին գործոց նախարարին հետ իր հանդիպումին հաստատած է, որ լիբանանեան կառավարութիւնը շահագրգռուած է հարաւի մէջ հաւանական մագլցումի կանխարգիլումով, եւ յանձնարու է ընելու իր կարելիին նման բան կանխարգիլելու համար: «Ասոր համար միասնաբար պիտի աշխատին»:

«Երէկ (նախանցեալ օր) շարք մը վտանգաւոր դէպքեր պատահեցան հարաւի սահմանին վրայ եւ կարգ մը ձեռնարկութիւններ կատարուած են այս գծով», ըսաւ Պեթըլ, աւելցնելով, որ Ռուսիոյ կողմէ իր կարելիին կ'ընէ կանխարգիլելու մագլցումը:

Լիբանանէի ամերիկեան պահանջներու մասին հարցումին մը պատասխանելով Պեթըլ ըսաւ, որ խօսած են լիբանանեան կառավարութեան որդեգրած միջոցառումներուն մասին, լիբանանեան կառավարութիւնը շատ լաւ գիտէ, թէ ինչ պէտք է. ընէ եւ իր գիտակցի հարաւի մէջ ապահովութեան պահպանումի եւ մագլցումի կանխարգիլման գծով իր պատասխանատուութիւններուն:

ՍՈՒՊԸԱՆԻ

Իրանի դեսպան Մոհամէտ Ալի Սուպհանի Պրըրիի հետ տեսակցելէ ետք յայտնեց, որ քննարկած են շրջանային վիճակն ու պաղեստինցիներուն ապրած ողբերգութիւնը, որ կը նմանի 1948ի դէպքերուն եւ պիտի վճռէ շրջանի ապագան: «Այս վտանգաւոր պահուն անհրաժեշտ է արաբական եւ իսլամական պետութիւններուն միջեւ յաւելեալ զօրակցութիւն, որովհետեւ սինականներ կ'անտեսեն բոլոր կարմիր գիծերը, մարդկային արժէքները, միջազգային օրէնքները եւ միջազգային որոշումները», ըսաւ ան:

Սուպհանի ցառով հաստատեց, որ Միացեալ Նահանգներ Իսրայէլի զօրավիգ կանգնելով՝ մեղսակից են անոր գործած ոճիրներուն, «եւ Իսրայէլի վարչապետ Շարոն շատ լաւ կը հասկնայ, որ իր ուժերը հետացնելու ամերիկեան պահանջները լուրջ չեն»:

«Արաբ, իսլամ եւ այլ ժողովուրդներ զօրավիգ կը կանգնին պաղեստինցի ժողովուրդին, բայց վարչակարգերն ու պետական պատասխանատուները լուրջ աշխատանք չեն տանիր», ըսաւ ան, հաստատելով, որ Իրան նեցուկ կը կանգնի պաղեստինեան եւ լիբանանեան դիմադրութեանը, մինչ Միացեալ Նահանգներ կ'ուզեն, որ Իրան եւ Սուրիա զօրավիգ չկանգնին արդար իրաւունքներուն համար պահանջատիրութեան, բայց Իրան, Սուրիա կամ արաբական եւ իսլամական երկիրները չեն կրնար պիշիլ պաղեստինցի ժողովուրդի արդար իրաւունքները:

Հարաւի մէջ «Բաթիոնիզմ»ներու արձակումին մասին Սուպհանի ըսաւ, որ Իրան զօրավիգ կը կանգնի բռնագրաւեալ հողերու վերատիրանալու Լիբանանի իրաւունքին, իսկ եթէ պաղեստինցիներուն դէմ բարբարոս արարքներ շարունակուին, ոչ ոք պիտի կարենայ երաշխաւորել Իսրայէլի հետ արաբական սահմաններու հանդարտութիւնը:

ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԿԸ ՓՐԿՈՒԻ ՄԱՐԱՓՈՐՁԷ ՄԸ

ՔԱՊՈՒԼ, 8 (ՌՈՅԹԸՐԶ)։- Աֆղանիստանի պաշտպանութեան նախարար Մոհամէտ Ֆահիմ մահափորձէ մը փրկուած է երէկ, մինչ մայրաքաղաք Քապուլ հրթրոսային նոր յարձակումի մը ենթարկուած է:

Յարձակումները, որոնք տեղի կ'ունենան Մոհամէտ Ֆահիմի մէջ ամերիկեան զիջարութեամբ պատերազմին սկսումին վեցամեայ տարեդարձէն օր մը ետք, մեծ նահանջներ էին երկրին վերականգնումի ճիգերուն համար:

Անոնք նոր մտահոգութեանց դուռ բացած են նախկին թագաւոր Չահիր Շահի ապահովութեան մասին, մինչ ան կը պատրաստուի յառաջիկայ շաբաթ քաղաքին Աֆղանիստան վերադառնալու: Մտավախութիւններ կան նաեւ Լոյա

Ճիրկայի (ցեղային մեծն խորհուրդ) ապահով կերպով կայացման գծով: Ժողովը տեղի պիտի ունենայ Յունիսիսի հաւանութիւն տալու համար փոխանցման հանգրուանի ղեկավար Համիտ Քարպայի կամ նոր կառավարութիւն մը ընտրելու համար:

Արտաքին գործոց նախարարութեան բանբեր՝ Օմար Սամատ, թալեպան վերապրողներ եւ Պըն Լատէնի «Քալիտա» ցանցի անդամներ ամբաստանած է իրբնէ հաւանական կասկածելիներ՝ նորագոյն վայրագութեանց աղբյուրները:

Ան չէ անտեսած նոյնպէս թմրեցուցիչի մաքսանեցնողութեան «ղեկավար» ներու մեղսակցութիւնը՝ Ֆահիմի դէմ մահափորձին մէջ: Միւս կողմէ, Կիրա-

կի գիշեր առնուապէս 8 աֆղան երկրագործներ սպաննուած են եւ 35 ուրիշներ վիրաւորուած՝ հարաւարեւմտեան Հեյմանտ նահանգին Քաճաքի շրջանին մէջ բողոքներու ընթացքին: Նահանգը Աֆղանիստանի աֆիսի ցանքի մեծագոյն շրջանն է:

Նախկին թագաւոր Չահիր Շահ Հոնմէն Ապրիլի կէսերուն պիտի վերադառնայ եւ պիտի նախագահէ Լոյա Ճիրկայի բացման նիստին:

Պաշտօնատարներ յայտնած են, թէ շուրջ 160 կասկածելիներ ձերբակալուած են՝ փոխանցման վարչակարգը տապալելու համար ենթադրեալ դաւի մը կապակցութեամբ: Անոնք նախկին վարչապետ Կուլպուտին Հիքմատիար ամբաստանած են դաւախելու կանգնելու յանցանքով:

ԻՐԱ ԻՐ ՉԷՆՔԵՐՈՒՆ ՄԷԿ ԲԱԺԻՆԸ ՓՃԱՅՈՒՑԱԾ Է

ՊԵԼՅԱՍԹ, 8 (ՌՈՅԹԸՐԶ)։- Հիւսիսային Իրլանտայի ապագինման հարցերու պատասխանատու մարմինը Երկուշաբթի օր յայտնած է, թէ

ԻՐԱ անցեալ տարուան դէպի ապագինում առաջին քայլէն ետք, իր ապօրինի զէնքերուն մէկ այլ բաժինը անգործածելի դարձուցած է:

Առանձինն հաղորդագրութեամբ մը, Իրլանտական Հանրապետական Բանակը յայտնած է, թէ զէնքերը չէ գործարկուած է, որպէսզի Բրիտանիոյ իշխանութեան ներքեւ գտնուող Հիւսիսային Իրլանտայի խաղաղութեան գործընթացը «կարելի ըլլայ կայուն դարձնել եւ ամբողջով»:

ԱՆՃԵՐԻԱ

ՊԵՐՊԵՐՆԵՐՈՒ ԼԵՁՈՒՆ ՍՏԱՅԱԻ ԱՐԱՔԵՐԵՆԻ ՀԱՄԱՀԱՒԱՍԱՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

ԱԼԺԷ, 8 (ՌՈՅԹԸՐԶ)։- Այճերիոյ խորհրդարանը Երկուշաբթի օր ջանքախիչ մեծամասնութեամբ զօրակցութիւն արտայայտած է սահմանադրութեան բարեփոխումի առաջարկի մը հանդէպ, պերպերներու թամպիլթ լեզուին արաբերէնի հետ հաւասար հանգամանք տալով: Այս քայլին նպատակն էր վերջ տալ Քապիլիի շրջանին մէջ տարուան մը խռովութիւններուն:

Բարեփոխումը, որուն առաջարկը կատարած է նախագահ Ապտէլպպի Պուրաֆիլիքա, վերջ կու տայ կառավարութեան 40 տարուան մերժողական կեցուածքին՝ երկու լեզուներով դրութեան մը որդեգրումին գծով, զայն ազգային հողային եւ մշակութային միասնականութեան սպանալիք նկատելով:

Կենթարդուի, թէ ԻՐԱ հաւաքած է Արեւմտեան Եւրոպայի մէջ զինեալներու պատկանող զէնքերու, զինամթերքի եւ պայթուցիկ նիւթերու մեծագոյն քանակը:

Անիկա կը ջնջէ լեզուի կապուած հարցը իբրեւ արեւելեան Այճերիոյ Քապիլիի շրջանին մէջ շարունակուող դժգոհութեանց պատճառ մը՝ Մայիս 30ի խորհրդարանական ընտրութեանց նախօրեակին:

Բրիտանիոյ Հիւսիսային Իրլանտայի հարցերու պատասխանատու նախարար Ճոն Ռիտ յայտնած է, թէ ԻՐԱի քայլը ցուցանիչ է, թէ նահանգը ճիշդ ուղղութեամբ կ'ընթանայ:

Ապագինման յայտարարութիւնը ջերմօրէն ողջունած են Բրիտանիոյ եւ Իրլանտայի կառավարութիւնները: Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլէյր զայն «չափազանց նշանակալից» որակած է:

Խորհրդարանին 514 անդամներուն աւելի քան 90 առ հարիւրը քուէարկած է ի նպաստ սահմանադրութեան մէջ հետեւեալ նախադատութիւնը աւելցնելու. «Թամպիլթը նոյնպէս ազգային լեզու մըն է»:

Միւս կողմէ, իսրայէլեան ուժերը ապահովութեան խիստ միջոցառումներ կիրարկեցին Լիբանանի սահմանամերձ Մթըլլէ ընկերութեան վայրին շուրջ: Իսրայէլեան բանակը ճիթիներու նոր կայան մը տեղադրեց Լիբանանի սահմանին մերձակայ շրջաններու մէջ: Իսկ շրջանի ղեկավարները բազմապատկուեցան սահմանի մօտ:

Ան կող ուղղած է նահանգին «Լոյքիս» զինեալ խմբակներուն, որպէսզի հակազդեն՝ նմանօրինակ քայլով մը:

Որոշումի թիւ 47/1

NARRA TRADING

& GENERAL SERVICES CO. S.A.R.L.

ՆԱՐԱ ԹԵՅՏԻՆԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ս.Պ.Ը.

(Սեփականատը՝ Վահէ Մանուշակեան)

ՎԻԵԹՆԱՄԵՆ ԵԹՈՎՊԻԱՅԵՆ ՍՐԻ ԼԱՆՔԱՅԵՆ ԵՒ ՖԻԼԻՓԻՆԵՆ ՄՊԱՍՈՒԷԻՆԵՐՈՒ ԱՊԱՆՈՎՈՒՄ

- Անմիջական յանձնում եւ ապահովագրութիւն:
- Մեր նշանաբանը՝ անկեղծութիւն, ապահովութիւն,
- Մասնաւոր գիներ, վճարման դիրութիւն եւ երկար տարիներու փորձառութիւն:

Պաուլիտ, City Hospital հիւանդանոցի փողոց, «Էլի» Դրամատան շէնք, 4րդ յարկ: Հեռ. 03/324799, 01/897633 եւ 03/489989

ԻՍՐԱՅԵԼԻ ԴԱՇՆԱԿԻՑ ՄԻԱՑԵԱԼ ՆԱԳԱՆԳԵՐԸ ՊԱՏԺԵԼՈՒ ԶԱՄԱՐ

ԻՐԱՔ ՄԷԿ ԱՄԻՍՈՎ ՊԵՏԻ ԱՌԿԱԽԷ ՔԱՐԻՒՂԻ ԱՐՏԱԾՈՒՄԸ

Իրաքի նախագահ Սատտամ Հիւսէյն երէկ յայտարարեց, որ մէկ ամիս պիտի առկայի քարիւղի արտածումը, իբրեւ բողոք պաղեստինեան շրջաններուն հանդէպ Իսրայէլի որդեգրած միջոցառումներուն դէմ:

Իրաքի որոշումը պատճառ դարձաւ, որ միջազգային շուկայի վրայ արագ յաւելում մը արձանագրեն քարիւղի սակերը: Սատտամ ըսաւ, որ արտածումը պիտի վերսկսի մէկ ամիսէն, կամ անկէ առաջ, եթէ Իսրայէլ ուժերը հետացնէ պաղեստինեան ինքնավար շրջաններէն:

Իրաք կը հայտնայ քարիւղի համաշխարհային արտածման չորս առ հարիւրը: ՕՓԷՔի ընդհանուր քարտուղար Ալի Ռոտրիկէս ըսաւ, որ խորհրդակցութիւններ պիտի ունենայ քարիւղ արտադրող երկիրներուն հետ, ՕՓԷՔի արտադարձ ժողով մը գումարելու համար:

Իր խօսքին մէջ, Սատտամ ըսաւ, որ քարիւղի արտածումը սառեցնելով, Իրաք կ'ուզէ պատժել Իսրայէլի բարեկամ ու դաշնակից Միացեալ Նահանգները:

Քարիւղ արտածող մեծագոյն երկիրը՝ Մեքսիկոյն Արաբիա քանի մը օր առաջ յայտարարած էր, որ պատաստ է փակելու շուկայի վրայ ստեղծուելիք բացը, եթէ Իրաք գործադրութեան դնէ սպանալիքը:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԾԱՅՐԱՅԵՂԱԿԱՆՆԵՐՈՒ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ԹՈՒՆՉԵԼԻ, 8 (ՌՈՅԹԸՐԶ)։- Հիւսիսային Իրաքի քրտական շրջաններուն մէջ սուրիականութիւնը ձերբակալուած է իսլամական երեք ծայրայեղականներ՝ քիւրտ քաղաքական բարձրաստիճան անձնատրութեան մը սպանութեան համար դաւ սարքած ըլլալու յանցանքով:

Կասկածելիները Կիրակի օր ամբաստանած են անցեալ շաբաթ քիւրտիստանի Հայրենասիրական Միութեան շրջանային կառավարութեան նախագահ Պարիմ Սալիիի դէմ յարձակումի մը կապակցութեամբ: Ան անվաս դուրս եկած է դէպքէն, որուն ընթացքին երկու պիւնջայնէր բախում ունեցած են անոր թիկնապահներուն հետ:

Ըստ կուսակցութեան մէկ պաշտօնատարին, շրջանային մայրաքաղաք Մուլայմանիէի մէջ տեղի ունեցած բախումին 7 հոգի, ներառեալ՝ 2 պիւնջայները, սպաննուած են:

Ք. Հ. Միութիւնը յայտնած է, թէ կասկածելիները անդամ էին ճունտ-Իսլամ խմբակին, որուն անդամները, ըստ կուսակցութեան, Աֆղանիստանի մէջ «Քալիտա» ցանցին կեդրոններուն մէջ մարտուած են:

ՄԱՋԱՐԷՇ ԸՐՊԱԱՅԻ...

Շարունակուած 2րդ էջէն

նութիւնը «սահմանափակ եւ ճշգրիտ ձեւով հակադարձելով Հրգապալայի յարձակումներուն, որովհետեւ այս պահուն քաղաքական ճիգեր ի գործ կը դրուին վերջ դնելու այս արարքներուն»: «Իսրայէլ չ'ուզէր նոր ճակատ մը բանալ, բայց ինքնազուստի քաղաքականութիւնը երկար պիտի չտեսէ», կը գրէր թերթը:

Միւս կողմէ, իսրայէլեան ուժերը ապահովութեան խիստ միջոցառումներ կիրարկեցին Լիբանանի սահմանամերձ Մթըլլէ ընկերութեան վայրին շուրջ: Իսրայէլեան բանակը ճիթիներու նոր կայան մը տեղադրեց Լիբանանի սահմանին մերձակայ շրջաններու մէջ: Իսկ շրջանի ղեկավարները բազմապատկուեցան սահմանի մօտ:

ՏԸ ՄԻՍՈՒՐԱ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՍՕՏ

Պաշտպանութեան նախարար Խալիլ Հըրաուի երէկ ընդունեց հարաւի մէջ ՄԱԿի ընդհանուր քարտուղարի ներկայացուցիչ Սթեֆան Տը Միսթուրան, որուն հետ քննարկեց հարաւի եւ պաղեստինեան շրջաններէն ներս իսրայէլեան վայրագութիւնները:

Հըրաուի վերահաստատեց, որ Լիբանան յանձնառու է երաշխաւորելու «Կապոյա Գիծ»ի վրայ կայունութիւնը, եւ ներկայացուց այս ուղղութեամբ լիբանանեան պետութեան տարած քաղաքական, ապահովական եւ զինուորական աշխատանքը: Ան ընդգծեց, որ այս աշխատանքները արդիւնաւորուած են եւ բազմաթիւ արարքներ կանխարգիլուած են:

ՀԱՄՍՈՒՏ. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ «ԱՊՈՅՑ ԳԻՏ»Ի ԱՊԱՆՈՎՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտ երէկ վերահաստատեց, որ Մազարէճ Շըպան լիբանանեան հող է եւ Լիբանան իրաւունք ունի բոլոր միջոցներով աշխատելու անոր վերատիրանալու համար: Համմուտ միւս կողմէ հաստատեց, որ հարաւային սահմաններուն վրայ կացութիւնը լաւապէս «զսպած է» պետութիւնը, որ դիմած է բոլոր անհրաժեշտ միջոցառումներուն, որպէսզի այդ կացութիւնը մնայ հակազդիւրի տակ:



ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ԼՈՒՐԵՐ ԶԱՒԱԽԵԸՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի պաշտոնական պատուիրակության ղեկավարը, որուն մաս կը կազմէին Հայաստանի վարչապետի խորհրդական Ստեփան Մարգարեան, Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավար Առուշան Յակոբեան եւ վրաստանի մէջ Հայաստանի դեսպան Գ. Խոսրոյան, 5 Ապրիլին այցելեց Զաւարթեան տեսակցութիւն մը ունեցաւ շրջանին մէջ վրաստանի նախագահի լիազօր ներկայացուցիչ Թ. Մոսիաշ-Վիլիի հետ:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Հայաստանի եւ վրաստանի սահմանակից շրջաններու համագործակցութեան, ինչպէս նաեւ Զաւարթեան հայ բնակչութիւնը յուզող հարցերը:

ՄԱՐԶԱՎԱՐ ԿԵԱՆՔԸ ԱՆՄԵՒԹԱՐ ՎԻՃԱԿԻ ՄԷՋ

Ախալքալաքի շրջանին մէջ մարզական կեանքը կը տնօրէնէ շրջանային վարչութեան մարմնակազմութեան բաժանմունքը: Վերջինս սակայն միջոցներու բացակայութեան պատճառով չի կրնար որեւէ աշխատանք տանել:

Մարզական կեանքին մէջ որոշ աշխուժութիւն կը նկատուի Եւրոպայի կամաւոր մարզական ընկերութեան մէջ: Շրջանին մէջ ամէն տարի տեղի կ'ունենայ ֆուտբոլի ախոյեանութիւն: Այս տարի Եւրոպայի կազմակերպած է նաեւ վոլիպոլի մրցաշարք նուիրուած ծնունդով ջաւախքի ազատամարտիկ վահան Զատիկեանի յիշատակին:

Պօստիով Զաւարթեան մէջ մարզական կեանքի աշխուժացման մասին՝ ընկերութեան նախագահ Մոսկուա Ղանդիլեան կը նշէ, որ այս հարցով մեծ նշանակութիւն պիտի ունենայ Ախալքալաքի մէջ 1986 թուականին սկսած, բայց մինչեւ օրս չաւարտած երեք յարկանի մարզահամալիրին կառուցումը:

ՀՄԱՅՅԵԱԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԿԸ ՀԵՐՔԷ

Հայաստանի Ազգային ժողովի «Ազրոարդիւնարեւրական ժողովրդական Միաւորում» պատգամաւորական խումբի ղեկավար Համայնակ Յովհաննիսեան 4 Ապրիլին խորհրդարանական գրոյցներու ընթացքին հերքեց խումբին պառակտման մասին տարածւած լուրերը:

Ան նշեց, որ մեծամասնական ընտրակարգով ընտրուած պատգամաւորներէն կազմուած խումբը որեւէ ժամանակէ աւելի միասնակամ է:

ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ՝ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ռուսիոյ կառավարութիւնը որոշում տուած է Հայաստանի հետ համաձայնագիր ստորագրել զինուորական մարզին մէջ տեղեկատուութեան փոխանակման մասին:

Ռուսիոյ տեղեկատուութեան նախարարութիւնը յայտնած է, որ Ռուսիոյ կառավարութիւնը հաւանութիւն տուած է համաձայնագրի նախագիծին եւ պաշտպանութեան նախարարութեան յանձնարարած է Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան մասնակցութեամբ բանակցութիւններ վարել հայկական կողմին հետ:

Համաձայնագրի նախագիծը կը նախատեսէ զինուորական մարզին մէջ տեղեկատուութեան փոխանակում միջազգային իրաւունքի հանրաճանաչ օրէնքներուն համապատասխան: Համաձայնագիրը կը կնքուի հինգ տարուան ժամկետով:

ՀԱՅԱՍՏԱՆ- ՌՈՒՍԻԱ

ԲՆԱԿԱՆ ԱԴԱՄԱՆԴԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ

5 Ապրիլին Ռուսիոյ մէջ Հայաստանի դեսպանատան մէջ տեղի ունեցաւ Հայաստանի կառավարութեան եւ Ռուսիոյ կառավարութեան միջև 2002-2006 թուականներուն Հայաստան բնական աղաման մատակարարելու մասին համաձայնագրի ստորագրութեան արարողութիւնը:

Համաձայնագիրը Հայաստանի կառավարութեան կողմէ ստորագրած է Հայաստանի առեւտուրի եւ տնտեսական զարգացման նախարար Կարէն Ժշմարիտեան, իսկ Ռուսիոյ կառավարութեան կողմէ՝ Ռուսիոյ էլեւմուտքի առաջին փոխ նախարար Ալեքսէյ Ուլիազայեւ:

Ըստ համաձայնագրին, 2002-2006 թուականներուն, Ռուսիա Հայաստանի պիտի մատակարարէ 2 միլիոն 100 հզար քարաթոս կազմակերպող արտադրատեսակներուն համար ոչ պիտանի թէքնիք բնական աղամանը:

«Ա1+»Ի ՓՎԱՌՄԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՎԱՐԿՈՒՄԻ ԱՌԻԹ

4 Ապրիլին Հայաստանի Ազգային ժողովի Հ. Յ. Դ. Խմբակցութեան ներկայացուցիչ Աղուան վարդաբեան արտասանեց յայտնեց «Ա1+» պատկերասփիւռի կայանին պարտութեան համար նշելով, որ եթէ ինք վճիռ կայացնող համապատասխան յանձնարումներն անդամ ըլլար, կողմ պիտի քուէարկէր՝ ի շահ «Ա1+»ի: Լրատուական ուղղուածութեան «Ա1+» եւ «Նոյեան Տապան» պատկերասփիւռի ընկերութիւնները սփռուած գրկելու եւ սփռումի իրաւունքը գուարճալի յայտարարեցին տրամադրելու գծով Ա. Վարդաբեան նշեց, որ «Շարմ»ը կրնար տակաւին եթեր արձակուել՝ ցուցադրելով իր գուարճալի հաղորդումները ալ ընկերութիւններու միջոցով, որոնց շարքին՝ նաեւ «Ա1+»ով: Իսկ ինչ կը վերաբերի այս առիթով բարձրացած աղմուկին, վարդաբեան դիտել տուաւ, որ «ստեղծուած իրավիճակը որոշ քաղաքական ուժերու, որոնց շարքին նաեւ նախկին իշխանութիւններու ներկայացուցիչներուն շահարկումի տեղի տուաւ, ինչ որ որեւէ կապ չունի իր օգրի ազատութեան հետ»:

ՉԵԿՈՅՆԵՐՈՒ ՄՐՅՈՒՄ

Սեւեռական Տնտեսական Համագործակցութեան կազմակերպութեան շրջագիծին մէջ գործող սեւեռական ուսումնասիրութիւններու միջազգային կեդրոնը յայտարարած է «Սեւեռական Տնտեսական Համագործակցութիւնը 21րդ դարուն. անցեալը, ներկան եւ ապագան» նիւթով գեկոյցներու մրցում՝ նուիրուած Սեւեռական Տնտեսական Համագործակցութեան հիմնադրութեան 10ամեակին:

Մրցումին նպատակն է Սեւեռական Տնտեսական Համագործակցութեան անդամ երկիրներու երիտասարդ սերունդին ներկայացուցիչները իրազեկ դարձնել Սեւեռական Տնտեսական Համագործակցութեան գործընթացին եւ շրջանային հիմնախնդիրներուն մասին: Մասնակցողները պէտք է ըլլան 28 տարեկանէն աւելի: Իւրաքանչիւր Սեւեռական Տնտեսական Համագործակցութեան անդամ երկրէն լաւագոյններուն պիտի վկայականներ եւ զրամական մրցանակներ:

ՉԵԿՈՅՆԵՐՈՒ ՄՐՅՈՒՄ

Սեւեռական Տնտեսական Համագործակցութեան կազմակերպութեան շրջագիծին մէջ գործող սեւեռական ուսումնասիրութիւններու միջազգային կեդրոնը յայտարարած է «Սեւեռական Տնտեսական Համագործակցութիւնը 21րդ դարուն. անցեալը, ներկան եւ ապագան» նիւթով գեկոյցներու մրցում՝ նուիրուած Սեւեռական Տնտեսական Համագործակցութեան հիմնադրութեան 10ամեակին:

Մրցումին նպատակն է Սեւեռական Տնտեսական Համագործակցութեան անդամ երկիրներու երիտասարդ սերունդին ներկայացուցիչները իրազեկ դարձնել Սեւեռական Տնտեսական Համագործակցութեան գործընթացին եւ շրջանային հիմնախնդիրներուն մասին: Մասնակցողները պէտք է ըլլան 28 տարեկանէն աւելի: Իւրաքանչիւր Սեւեռական Տնտեսական Համագործակցութեան անդամ երկրէն լաւագոյններուն պիտի վկայականներ եւ զրամական մրցանակներ:

«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ» ԸՔԱՆՇԱՆ ԱԶԱՏ ԱՍԱՏՈՒՐՈՎԻ

4 Ապրիլին Ամենայն հայոց Գարեգին Բ. կաթողիկոս հանդիպում մը ունեցաւ Հարաւային Ռուսիոյ թեմական համայնքի պատուիրակութեան հետ, որուն ընթացքին Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» շքանշան յանձնեց բարերար Ազատ Ասատուրովի:

Ս. Էջմիածինի մամուլի դիւանին համաձայն, Հարաւային Ռուսիոյ թեմակալ առաջնորդին եւ թեմական խորհուրդին խնդրանքին ընդառաջելով՝ Ամենայն հայոց կաթողիկոսութեան բարձրագոյն պարզեւր շնորհուած է Ա. Ասատուրովին՝ ազգային կեանքին մէջ ունեցած իր մեծ վաստակին համար: Մասնաւորապէս անոր ջանքերով Առաջին մէջ կառուցուած է Ս. Մարգարէ եկեղեցին:

Գարեգին Բ. Ազատ Ասատուրովին յանձնելով շքանշանը՝ բարձր գնահատած է ազգին, հայրենիքին եւ եկեղեցիին մատուցած անոր ծառայութիւնները:

«ՌՈՐԼՏ ՎԻԺԸՆ. ԱՐՄԻՆԻԱ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ՝ ԿԱՊԱՆԻ ՄԷՋ

Մօտ երեք տարիէ ի վեր «Ուորլտ Վիժըն. Արմինիա» կազմակերպութեան կողմէ հիմնադրուած «Էս. Ի. Էֆ. Ինթըրնէշնըլ» ընկերութիւնը վարկային ծրագիրներ կ'իրականացնէ Սիւսիանի, Գորիսի եւ Սիւնիքի մարզի 21 գիւղերու մէջ: 4 Ապրիլին կազմակերպութեան զբառնեակին բացումը կատարուեցաւ Կապանի մէջ:

Ըստ կազմակերպութեան պիզնեսի զարգացման ֆոնտի տնօրէն ձոն Սաքսի, անշարժ գոյքի եւ ոսկիի դիմաց պիտի տրամադրուին մինչեւ 10 հազար տոլար գումարով վարկեր, որոնք պիտի խթանեն պիզնեսի զարգացումը շրջանին մէջ: Նախատեսուած է տրամադրել նաեւ յատուկ ֆոնտեր՝ խթանելու քաղաքացիական հասարակութեան զարգացման նախաձեռնութիւնները, ինչպէս նաեւ՝ համայնքներու զարգացման ուղղուած ծրագիրները:

ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԲԱՅՄԱՆ ՕՐԻՆԱԳԻԾԸ՝ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Քալիֆորնիոյ նահանգային խորհրդարանը 4 Ապրիլին միաձայնութեամբ ընդունած է Երեւանի մէջ Քալիֆորնիոյ առեւտրական գրասենեակ հիմնելու մասին օրինագիծը:

Գրասենեակի նպատակը պիտի ըլլայ սերտացնել շրջանի երկիրներու եւ Քալիֆորնիոյ գործարար կապերը:

Օրինագիծը ներկայացուցած էր ծերակուտական ձէք Սքաթ, որ 25էն 28 Մարտ Հ. Յ. Դաշնակցութեան հրաւերով կը գտնուէր Հայաստանի մէջ եւ տեսակցութիւններ ունեցած էր Հայաստանի բարձրաստիճան պաշտօնատարներուն հետ՝ քննելու համար յիշեալ խնդիրին հետ կապուած մանրամասնութիւնները:

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՄՏԵՂԾՄԱՆ ՀԱՐՅԸ ԶԷ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Հարաւային Օսեթիոյ խորհրդարանի նախագահ Սթանիսլաւ Քոչիեւ «Փրայմ Նիլոյ» լրատու գործակալութեան յայտնած է, որ «առայծառ տակաւին չէ քննարկուած» չճանչցուած չորս հանրապետութիւններու՝ Աբխազիոյ, Լեռնային Ղարաբաղի, Մերձտնեսիի եւ Հարաւային Օսեթիոյ միջև զինուորական դաշինքի մը ստեղծման հարցը:

Ան յայտնեց սակայն, թէ հակառակ այս իրողութեան, «Եթէ Հարաւային Օսեթիոյ համար իրական սպառնալիք ծագի, ապա անհրաժեշտութիւնը կը ստեղծուի դաշնակիցներ փնտնելու»:

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՌԻՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել կապառնողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնակալ թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազգակ»ի ծանուցումներու գրասենեակը:

ԼՕԽԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՀԱԲԹՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ



Լիբանանահայ Օգնութեան Խաչի Օր: Ասիական հիմնադրութեան առաջին օրերէն ի վեր աւանդութիւն դարձած այն օրն է, երբ Լիբանանահայ Օգնութեան Խաչը կը դիմէ հանրութեան՝ ապահովելու Գիւրական օժանդակութիւն, իր տարեկան ծրագիրներու իրականացման համար:

Հանգանակութեան օր է: Օր մը, երբ ԼՕԽԻ անդամները իրենց համատարած եւ հաւատարմ գերագոյն չափանիշով հրապարակ կ'իջնեն քաջ գիտնալով, թէ ինչ - ինչ երեւոյթներու կրճակ հանդիպել երեւոյթներ մեթոմի էլ եւ տեղի ակնարկութիւններու, ինչպէս նաեւ երեւոյթներ քաջալերանքի ու մասնակցութեան, որոնք գերիշխելով նախորդներուն վրայ ուժ եւ քաջութիւն կը ներշնչեն եւ անձնագոհութեան թելադրանքը կը փոխանցեն:

Հանգանակութեան օր է: «Մոմապահութեան Օր»էն մինչեւ «Պնակ մը կերպար»ի եւ «Օգնութեան Խաչի օր»ունակ հանգանակութեան օրերն ու շաբաթները անոնք ԼՕԽԻ գործունեութեան անբակտելի եւ կենսական օղակները հանդիսացած են, օղակներ, որոնցմէ կախեալ են աշակերտի դպրոցական թոշակը, հիւանդին դեղն ու բժշկութիւնը, անգործին ու կարիքաւորին օժանդակութիւնը, մամիկին հոգատարութիւնը, հայուհիին ինքնահանաչումն ու զարգացումը, ընդհանրապէս հայ հասարակութեան լուսաւորումը, հայութիւնը իր գանձաւոր երեսներով օտար աշխարհին ծանօթացումը, լիբանանահայութեան որակն ու վարկը... այս բոլորը կ'իրականանան ԼՕԽԻ կողմէ կամուր գործունեութեամբ:

Հանգանակութեան օր է: Քանի մը ժամ ԼՕԽԻ «Արաքսի Պուլուրներ» ընկերաբժշկական կեդրոնին մէջ, քանի մը առիթներով ԼՕԽԻ մասնակցութեամբ վարչութիւններուն հետ, այլ առիթներով ԼՕԽԻ Շրջանային վարչութեան եւ իր յանձնարարութեան միջոցով մէջ, բաւարար եւ կանգնուած ըլլալու, ապրելու եւ գնահատելու այն հսկայ ճիգը, որ կը թափուի, ապահովելու եւ սպասարկելու համար այն բոլոր ծառայութիւնները, որոնք կարիքը կրկնալ գալ հայ համայնքին բոլոր գաւակները անխտիր:

Ամէն մարդ առիթ չունենար գործնապէս կամ բարոյապէս մասնակցի դառնալու այդ թափուած ճիգին. Օգնութեան Խաչի Օրունակ հանգանակութեան այն առիթն է, որուն ընթացքին մեր գանգաւանային կերպով կրճակ մեր Գիւրական աշակերտեամբ մասնակցի դառնալ այլ կամուրապէս թափուած ճիգին:

Տալուն մէջ աւելի մեծ հանգր կայ, քան՝ առեւտուր, կ'ըսենք յաւալ. երկու պարագային ալ Օգնութեան Խաչին մէջ անոնք յատկանշուած են իրենց յատուկ որակով՝ սիրով տանելու եւ արժանապատւութեամբ ստանալու յատկանշով: Ամէն տարին նոյն օրերուն Լիբանանահայ Օգնութեան Խաչի անդամները անսակարկ անձնագոհութեամբ կը զարնեն ծանօթին ու անձնօթին դուռը, եւ հպարտութեամբ, սիրով ու արժանապատւութեամբ կը հաւաքեն ազգայիններուն Գիւրական օժանդակութիւնները՝ նոյն գագուտներով գաւոնք բաժնելու համար անոնց, որոնք կարիքը ունին, այնպիսի ռոճ մը, որ չվիրաւորուի նաեւ ստացողին արժանապատւութիւնը:

Այս օրերուն, երբ կը խօսուի, եւ իրաւմբ, մարդկային արժեքներու չափանիշներու անկումին եւ անոնց իմաստին աղաւաղումին մասին, մեզմէ իւրաքանչիւրին պարտաւորութիւնն է պարզ եւ գեղեցիկ վարմունքով յաջողցնել այդ արժեքներուն վերահաստատումը մեր կեանքին ու կենցաղին մէջ: Այդ վերահաստատումը կը կարօտի երկու ձեւի միջամտութիւններու՝ մէկը բարոյական, միւսը՝ Գիւրական: Օգնութեան Խաչի Օրունակ հանգանակութեան օգտագործելը ստարաբուն համար այդ արժեքներուն վերահաստատումին, միացնելով երկուքը սիրով ու առատաձեռնօրէն մեր լուսնային տալով եւ մտածելով, որ մեր Գիւրական մասնակցութեամբ պիտի ստարաքը ընդհանուրի արժանապատւութեան վերականգնումին:

Այս Օրը մեր Օրն է. մեր կարգին, նոյնիսկ մեր ամենափոքր բայց սրտանց Գիւրական մասնակցութեամբ, կրնանք ստարաքել ԼՕԽԻ ծրագիրներուն եւ գործունեութեան յաջողութեան, այն ապահովութեամբ, որ մեր յատկացումին բարոյական արտայայտութիւնը պիտի արտացոլայ Լիբանանահայ Օգնութեան Խաչին ջամբած ծառայութեան ընդմէջէն:

S. Թ.

